Մրցույթ՝ Երևանի «Ջ.Աբրահամյանի անվան թիվ 111 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Մաթեմատիկա» (5 դասաժամ), «ԹԳՀԳ» (9 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
2) բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ), միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ,
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ,
10) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. ապրիլի 28-ի №596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում),
11) Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև 2-րդ կետի) պահանջով համապատասխան փաստաթուղթ,
12) Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխան տեղեկանք բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,

մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 3-ից մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 19-ին՝ ժամը՝ 14:00-ին, Երևանի Ջ.Աբրահամյանի անվան հ.111 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Լուկաշինի I փողոց հ. 5:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 35-31-83 հեռախոսահամարով: